



ՀՀ, Երևան 0010, Կառավարական 3-րդ մասնաշենք,  
Հայաստան Հիմնադրամ  
Հասարակայնության հետ կապերի բաժին  
Հեռ: + (374 10) 521505  
[pr@himonadram.org](mailto:pr@himonadram.org)  
[www.himonadram.org](http://www.himonadram.org)

## Մամլո հաղորդագրություն

### «Շուշի» պարախմբի առաջիկա համերգը Երևանում

**Երևան, 20 հունիսի, 2008թ.**: Ս/թ հունիսի 3-ին «Հայաստան» համահայկական հիմնադրամի հովանու ներքո Նյու Յորքի Ս.Վարդան Մայր տաճարի «Շուշի» պարախումբն իր 15 ամյակը կնշի Երևանի Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում:

Ելույթ կունենան համույթի 50 պարող-պարուհիներ, ճանաչված վոկալիստ Ջերմինե Ամիրյանը, Յովիկ Գրիգորյանը, Արմեն Յովհաննիսյանը, Սոսիե Մարտիրոսյանը, Սալաի Մայիլյանը, ասմունքող Անահիտ Իշկանյանը: Երաժշտական ղեկավարը Արդրանիկ Մուրադյանն է: Համերգի ընթացքում հանդես կգա նաեւ Երևանի «Վահագն» հարվածային խումբը՝ Արագ Օրդինյանի ղեկավարմամբ: Կատարողների թվում են նաեւ Նյու Յորքի օպերային թատրոնի երգիչ Վաղարշակ Օհանյանը եւ սիրված երգչուհի Լեյլա Սարիբեկյանը:

Հուլիսի 6-ին, ժամը 8-ին բացօթյա անվճար համերգ տեղի կունենա Նուբարաշենում տեղակայված թիվ 54574 գորամասի համար:

«Շուշի» պարախումբը հիմնվել է 1992 թվականին: Մի խումբ պատանիներից բաղկացած պարային համույթը, որը Հայաստանի սահմաններից դուրս ներկայացնում էր հայ մշակույթը, 1995թ-ին Շուշի քաղաքի ազատագրման երրորդ տարեդարձի առիթով անվանվեց «Շուշի» հայկական պարախումբ:

Այսօր՝ 15 տարի անց, խումբը մեծ ճանաչում է ձեռք բերել: Այն բազմաթիվ հյուրախաղեր է ունեցել տարբեր երկրներում՝ ըստ արժանվույն ներկայացնելով հայ արվեստն ու մշակույթը: Համույթը բաղկացած է դպրոցահասակ երեխաներից, ուսանողներից ու երիտասարդ պրոֆեսիոնալներից: Խմբի 110 պարող-պարուհիների մեծ մասն ամերիկաբնակ հայ երիտասարդներ են, որոնք ամեն շաբաթ հավաքվում են փորձեր անելու: Համույթի գեղարվեստական ղեկավարն ու խորեոգրաֆը փորձառու պարուսույց Սեդա Պասկալյան-Քանդարջյանն է:

Սեդա Պասկալյան-Քանդարջյանը պարարվեստով սկսել է զբաղվել վաղ հասակից, երբ ապրում էր Լիբանանում: Տեղափոխվելով ԱՄՆ՝ նա նույն խանդավառությամբ շարունակեց ոչ միայն պարել, այլև երիտասարդներին ուսուցանել իր արվեստը: Համույթի յուրաքանչյուր ելույթ հայրենիքի եւ նրա մշակույթի նկատմամբ մասնակիցների սիրո եւ նվիրումի վառ դրսևորումն է:

Համույթը բազում ելույթներ է ունեցել թե՛ հայ եւ թե՛ օտար հանդիսատեսի առջեւ, այդ թվում՝ Հայաստանում, Ղարաբաղում, Կանադայում, ԱՄՆ տարբեր նահանգներում: Հիշարժան էին հայրենիքում կայացած համերգները՝ նվիրված քրիստոնեության ընդունման 1700 ամյակին (2000թ., Խոր Վիրապում) եւ Մեծ եղեռնի 90-րդ տարելիցին (2005թ. մայիսին):

«Հայաստան» համահայկական հիմնադրամը հրավիրում է բոլորին ներկա գտնվելու հուլիսի 3-ին կայանալիք այս գեղեցիկ միջոցառմանը:

«Հայաստան» համահայկական հիմնադրամը շահույթ չհետապնդող կազմակերպություն է, որը հիմնադրվել է 1992թ-ին և կոչված է խթանելու մարդասիրական օգնությունը և ենթակառուցվածքների զարգացումը ՀՀ-ում և ԼՂՀ-ում: Հիմնադրամն ունի տեղական մարմիններ աշխարհի 19 երկրներում: